հիսուն դրամ[1]) կէօկտաշ, որ եղև երեսուն և մէկ թիլանի 200 դրամ (=224 կ. գր.). ի-սոցանէ դուրս եկն 16 թիլանի չորս հոխայ 350 դրամ (=120 կ. գր.) թուղթ, որ էր 13 օղմայ պիտանի և 15 դաստայ վտիտ, գործավորացն բաշխիչ եառ. ի դեկտեմբերի 20, օրն հինգշաբթի»։ «Ցապրիլի 21 (1777 թ.) օրն ուրբաթ, նոր վարպետ Նիկողայոսն սկսաւ ծեծել զնութ թղթոյն, բաշխիչ եառ որ նոր թուղթն հանէին ի յուլիսի 15. 3 զուրուշ»։ Այս քաղվածքից ելնելով, արտադրության պրոցեսի տեղության և գործարանի արտադրական կարողության մասին եզրակացություններ հանելը դուռ մասնագիտական հարց է, ուստի այն հանձնում ենք մասնագետների ուշադրությանը. նկատենք սակայն, որ բաշխիչ տալու ժամանակը կարող էր հետ մնալ թղթի արտադրության պրոցեսի ավարտումից։

Արտադրված թուղթը օգտագործվել է գլխավորապես տեղական կարիքների համար. դուցե մասամբ բավարարել է այլ վանքերի և թեմական առաջնորդների կարիքները. ինչ վերաբերվում է արտահանմանը դեպի հարեվան երկրներ՝ այդ մասին ճշտիվ տեղեկություններ չկան։ Սակայն կա մեկ փաստ, որը ենթադրել է տալիս, թե արտահանման հնարավորություն այնուամենայնիվ եղել է. 1776 թ. նոյեմբերի 6-ին Գրիգոր Զաքիկյանցին գրած նամակում Սիմեոն կաթողիկոսը հայտնում է, թե նրա կողմից ուղարկված մուրհակների հինգ տեսակ բլանկներից չորսական օրինակ ուղարկում է՞և եթե պահանջ կա թող հայտնի, որ շատ տպեն և ուղարկեն՝ Մադրասում ծախելու համար. ենթադրում ենք, որ այդ բլանկները տպվելու էին Էջմիածնի թղթի վրա. այլապես ինչ շահ այդ գործից։ Բացի այս՝ թղթի առանձին օրինակներ ուղարկված են Վրաց Հերակլ արքային, Կ. Պոլսի և Ռուսաստանի հայոց հոգևոր առաջնորդներին և այլոց։ Տեղում թուղթը մեծ մասամբ գործադրվել է տպարանում. Էջմիածնի թղթի վրա տպվել են մի շարք աշխատություններ, որոնցից հայտնի է Սիմեոն կաթողիկոսի «Պարտավճառ» աշխատությունը, որից Պետական Ձեռագրատանը (Մատենադարանում) կա հինգ օրինակ (հին տպագրեր № 102)։

Արտադրվող թուղթն օգտագործվել է նաև գրագրությունների համար. այժմ Պետական Ձեռագրատան (Մատենադարանի) արխիվում պահվում են բազմաթիվ վավերագրեր, գրված նույն թղթի վրա։

Որակի տեսակետից թուղթը բավական կոշտ, գույնով բաց-հարդագույն, գորշ կամ ոչ շատ սպիտակ. թուղթը ունի ջրանկար դրոշմ, որը իրենից ներկայացնում է մեկ կողմում «Սուրբ Էջմիածին» բառերի փակագիրը, որից ներքև «Մ. Կ.» Սիմեոն կաթողիկոս բառերի սկզբնատառերը, մյուս էջում՝ դարձյալ փակագրով «Թուին ՌՄԻԵ» (1776) և Գրիգոր Միքայելյանի (Խոջաջանյան, Զաքիկյան) անվան և ազգանվան սկզբնատառերը «Գ. Մ.»։ Ինչպես վերը նշեցինք այս Զաքիկյանի ծախսով է կառուցվել և տպարանը և թղթի գործարանը, որի անունը հավերժացնելու համար Սիմեոն կաթողիկոսը ոչ միայն արձանագրություններ փորագրեց տպարանի և թղթագործարանի ճակատներին, այլ նաև նրա անունը հիշատակել է ինչպես արտադրվող թղթի վրա, այնպես էլ տպագրվող գրքերի առաջին էջերում։

Սիմեոն Երևանցու կողմից կառուցված թղթի գործարանը ըստ երևույթին շատ կարճ կյանք ունեցավ. (ընդամենը 5—6 տարի)։ Նրա մահվանից հետո գործարանը դադարեց գործելուց (գործարանի ծախսերի մատյանում 1781 թվից հետո գրանցումներ այլևս չկան, իսկ դա ապացույց է գործարանի խափանման)։ 18-րդ դարի վերջին և 19-ի սկզբի քաղաքական անցուդարձերի՝ աղա Մամատ խանի արշավանքների և այնուհետև Ռուս-Պարսկական պատերազմի հետևանքով գործարանն ընդմիշտ ավերվեց և ավարի տրվեցին նրա մեծաղյա գործիքները։

* * *

Դուցե սրանով մեր հոդվածն ավարտեինք, եթե մեր առջև չծառանար անխուսափելի մի հարց. այդ այն է, թե նախքան Սիմեոն Երևանցու կողմից կառուցած գոր-

[1]) Ծանրության չափ է. մոտ 3 դրամ։